



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 12/20**

29.09.2020թ.

ք. Երևան

ՀՀ վարչական դատարանի դատավոր Գրիգոր Առաքելյանը (այսուհետ՝ Դիմող) թիվ ՎԴ/11311/05/19 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը (այսուհետ՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համապատասխանությունը Սահմանադրության 29-րդ հոդվածին:

Այսպես, դատախազության համակարգի աշխատակիցների սոցիալական ապահովության, մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքը երաշխավորում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որը սահմանում է, որ կենսաթոշակի իրավունք ունի դատախազի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով:

«Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազին պաշտոնից ազատելու հիմք է դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալը:

Վերոնշյալ իրավակարգավորումից ակնհայտ է, որ Օրենսդիրը տվյալ ոլորտի աշխատակիցների համար «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքով սահմանել է կենսաթոշակի հատուկ տեսակ այն անձանց համար, ովքեր պաշտոնից կազատվեն դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալու հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կճանաչվեն կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք կբերեն:

Սակայն, վերոնշյալ ընդհանուր կանոնից նույն օրենքի անցումային դրույթներով հատուկ կարգավորում է տրվել դատախազության համակարգի այն աշխատակիցների համար, ովքեր 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ունեն առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, ծնվել են մինչև 1974 թվականի հունվարի 1-ը, և պաշտոնից ազատվել են «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով:

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ դատախազին պաշտոնից ազատելու հիմք է անձնական դիմումը:

Վերոնշյալ իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ որպես ընդհանուր կանոն՝ Օրենսդիրը սահմանել է պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով պաշտոնից ազատվելու դեպքում դատախազի հատուկ տեսակի կենսաթոշակի իրավունքը, սակայն այդ ընդհանուր կանոնից բացառություն է նախատեսել 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն դատախազների համար, ովքեր ծնվել են մինչև 1974 թվականի հունվարի 1-ը, և պաշտոնից ազատվել են ոչ միայն պաշտոնավարման տարիքի լրանալու, այլ նաև սեփական դիմումի հիմքով:

Դիմողի մոտ ձևավորվել է համոզմունք, որ տվյալ իրավակարգավորումը խնդրահարույց է խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից այն հիմնավորմամբ, որ խտրական մոտեցում է ցուցաբերում սեփական նախաձեռնությամբ ներկայացրած դիմումի հիմքով դատախազի պաշտոնից ազատված անձանց և որակավորման հանձնաժողովի կողմից ատեստավորման արդյունքներով պաշտոնին

չհամապատասխանելու հիմքով ներկայացված միջնորդության հիման վրա պաշտոնից ազատված անձանց միջև հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմողը կարծում է, որ օրենսդիրը «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով չէր կարող մի կողմից խրախուսեր երկարամյա աշխատանքը, մյուս կողմից համապատասխան մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում խրախուսեր սեփական նախաձեռնությամբ պաշտոնից ազատումը, որպեսզի տվյալ դատախազը հետագայում չկրի ռիսկ «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով պաշտոնից ազատվելու դեպքում կենսաթոշակային ապահովություն չստանալու: Դիմողը գտնում է, որ ասվածը այնպիսի տարբերակում է, որ չունի իրավաչափ նպատակ:

Ամբողջ վերոնշյալի հաշվառմամբ Դիմողի մոտ ձևավորվել է ողջամիտ կասկած առ այն, որ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետն այնքանով, որքանով կենսաթոշակի իրավունք է սահմանում միայն «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձանց համար, և այլ պայմաններին բավարարելու դեպքում չի սահմանում կենսաթոշակի իրավունք նաև «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով դատախազի պաշտոնից ազատված անձանց համար, հակասում է Սահմանադրության 29-րդ հոդվածին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետն այնքանով, որքանով կենսաթոշակի իրավունք է սահմանում միայն «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձանց համար, և այլ պայմաններին բավարարելու դեպքում չի սահմանում կենսաթոշակի իրավունք նաև «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի

հիմքով դատախազի պաշտոնից ազատված անձանց համար, համապատասխանությունը Սահմանադրության 29-րդ հոդվածին:

Վիճարկվող «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի բովանդակությունը հետևյալն է.

3. 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝

1) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը:

Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

«Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

1. *Դատախազին պաշտոնից ազատելու հիմք են՝*

1) *անձնական դիմումը.*

2) *դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալը.*

Նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝

11) *սույն օրենքի 50-րդ հոդվածի 14-րդ մասի 6-րդ կետով սահմանված միջնորդության հիման վրա սույն օրենքի 50-րդ հոդվածի 19-րդ մասով սահմանված կարգով կայացված որոշումը.*

Նույն օրենքի 50-րդ հոդվածի 14-րդ մասի 6-րդ կետը սահմանում է, որ որակավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին: Իսկ 50-րդ հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ գլխավոր դատախազը որակավորման հանձնաժողովի՝ սույն հոդվածի 14-րդ մասի 4-րդ, 5-րդ կամ

6-րդ կետով կայացված որոշման և ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան միջնորդությունները բավարարելու կամ մերժելու մասին որոշում է ընդունում ոչ ուշ, քան որակավորման հանձնաժողովի որոշումն ու ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով անդրադարձել է խտրականության արգելքի սկզբունքին և ամրագրել հետևյալը.

ՄԴՈ–792, 24 փետրվարի, 2009թ. որոշման համաձայն՝ «5. ՀՀ Սահմանադրության 1, 3 և 14.1 հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

ՄԴՈ–731, 29 հունվարի, 2008թ. որոշման համաձայն՝ «10. ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող

փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:»:

ՄԴՈ-1142, 2 ապրիլի, 2014թ. որոշման համաձայն՝ «7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «կենսաթոշակ» հասկացությունը որևէ ձևով ամրագրված չէ: Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ (հոդվ.1), խտրականությունը բացառող հանգամանք (հոդվ. 14.1), աշխատողի շահի դրսևորում (հոդվ. 32), սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ (հոդվ. 37), պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ (հոդվ. 48), կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ (հոդվ. 89): Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հոշակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:»:

Խտրականության ցանկացած դրսևորման արգելման սկզբունքն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով, համաձայն որի՝ սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Ինչպես Դիմողն իրավացիորեն նկատել է, վիճելի իրավակարգավորումը՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, ըստ էության, նպատակ է հետապնդում երաշխավորելու այն դատախազների կենսաթոշակի իրավունքը, ովքեր ունեն երկարամյա ծառայության ստաժ, այն է՝ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, այսինքն՝ այս իրավակարգավորման նպատակը երկարամյա աշխատանքի

խրախուսումն է, որպիսի նպատակով է պայմանավորված, որ նաև երաշխավորվել է այն դատախազների կենսաթոշակի իրավունքը, ովքեր աշխատանքից կազատվեն սեփական դիմումի հիման վրա, ուստի այս պայմաններում, եթե օրենսդրի նպատակը երկարամյա աշխատանքի խրախուսումն է, և այստեղ չափանիշը 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալն է, ապա խտրական մոտեցում է, որ նույն կերպ չի խրախուսվում այն դատախազների երկարամյա աշխատանքը, և չի երաշխավորվում այն դատախազների կենսաթոշակի իրավունքը, ովքեր նույնպես ծնվել են մինչև 1974 թվականի հունվարի 1-ը, ունեն 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, սակայն պաշտոնից ազատվել են որակավորման հանձնաժողովի կողմից ատեստավորման արդյունքներով պաշտոնին չհամապատասխանելու հիմքով ներկայացված միջնորդության հիման վրա, այսինքն՝ «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով: Մտացվում է, որ միևնույն չափանիշներին բավարարելու պայմաններում սահմանված են տարբեր մոտեցումներ:

Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ *բոլորը հավասար են օրենքի առջև:* Նշվածի հիման վրա պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմը հնարավորություն չի տալիս այն անձանց, ովքեր աշխատանքից ազատվել են «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիման վրա, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի հիման վրա աշխատանքից ազատված անձինք՝ միևնույն չափանիշներին բավարարելու (2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա

մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու և մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված լինելու) պայմաններում:

Հարկ է նաև նկատել, որ «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով աշխատանքից ազատված անձին, եթե նա ունի 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, համաչափության տեսանկյունից իրավաչափ չէ նույնացնել, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման, կամ օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակման, կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի հիման վրա, կամ «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի այլ հիմքով աշխատանքից ազատված (բացառությամբ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի) անձի հետ, այն պարզ պատճառով, որ, եթե դատախազը ունի 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, ապա, ենթադրվում է, որ վերջինս «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ 3 տարին մեկ ատեստավորվել է ու եթե շարունակել է պաշտոնավարել, ապա համապատասխանել է զբաղեցրած պաշտոնին, և միայն վերջին ատեստավորման արդյունքում աշխատանքից ազատելը հիմք չէ 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող անձին զրկելու երկարամյա ծառայության համար տրվող կենսաթոշակից:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնանք Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության սկզբունքին, համաձայն որի՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Սահմանադրական դատարանը 2014 թվականի ապրիլի 18-ի ՄԴՈ–1148 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:»:

Անդրադառնալով նաև մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «... Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)»:

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՈ-677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

2015 թվականի դեկտեմբերի 08-ի ՍԴՈ-1244 որոշման մեջ արձանագրվել է հետևյալ դիրքորոշումը. «... Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե

այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին:»:

Եվ վերջապես անդրադառնանք Սահմանադրական դատարանի կողմից 2011 թվականի հոկտեմբերի 11-ի ՄԴՈ-991 որոշմանը, որում տեղ է գտել հետևյալ դիրքորոշումը. «7. Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ կենսաթոշակը և աշխատանքը միտված են միևնույն նպատակին՝ գոյության միջոցների ապահովմանը, աշխատանքը՝ որպես կենսապահովման միջոց, գործում է անձի լրիվ աշխատունակության պայմաններում, իսկ կենսաթոշակը՝ աշխատունակության սահմանափակման կամ կորստի պայմաններում: Հետևաբար, կենսաթոշակի իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձը, որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այլևս չի կարող այդ նպատակն իրացնել աշխատանքի միջոցով: Կենսաթոշակի իրավունքի ծագումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների կրճատմամբ:»:

Այսինքն՝ գործող կարգավորմամբ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու և մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված լինելու պայմաններով սեփական դիմումի հիման վրա կամ կենսաթոշակային տարիքը լրանալու կապակցությամբ աշխատանքից ազատված անձին տրամադրվում է երկարամյա ծառայության համար նախատեսված կենսաթոշակ, իսկ նույն չափանիշներին բավարարող, սակայն ատեստավորման արդյունքներով աշխատանքից ազատված անձին՝ ոչ: Նշված մոտեցումը չի բխում սահմանադրորեն երաշխավորված համաչափության սկզբունքից, չի համապատասխանում Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ չէ դրանց հասնելու համար: Իրեն սոցիալական և իրավական հռչակած պետությունը պարտավոր է ապահովել իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները, ապահովի անձանց սոցիալական ապահովության իրավունքի իրացումը և բացառի ցանկացած տեսակի խտրականություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, կարծում ենք, որ վիճարկվող դրույթի բովանդակությունը գործող կարգավորմամբ չի բխում Սահմանադրության 28-րդ, 29-րդ, 78-րդ և 83-րդ հոդվածների պահանջներից:

Անփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը՝ այնքանով, որքանով կենսաթոշակի իրավունք է սահմանում միայն «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձանց համար, և այլ պայմաններին բավարարելու դեպքում չի սահմանում կենսաթոշակի իրավունք նաև «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիմքով դատախազի պաշտոնից ազատված անձանց համար, խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան